ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 28 հունիսի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի /նախագահող/, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի /զեկուցող/, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ. Քոչարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ «2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության Կանոնադրությունում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 6 մայիսի 2011թ. ՀՀ սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության Կանոնադրությունում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը /այսուհետ՝ Արձանագրություն/ ստորագրվել է 2010թ. դեկտեմբերի 10-ին Մոսկվայում՝ Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյանի կողմից:

Նախ, հարկ է արձանագրել, որ 2002թ. հոկտեմբերի 7-ին Քիշնեւում ստորագրված՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության Կանոնադրությունը /այսուհետ՝ Կանոնադրություն/ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի 2003թ. սեպտեմբերի 10-ի թիվ Ն-018-3 որոշմամբ /ՀՀ սահմանադրական դատարանի 22.04.2003թ. ՍԴՈ-415 որոշում/:

Ըստ Արձանագրության նախաբանի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության Կանոնադրությունում փոփոխություններ կատարվել են դրա 27-րդ հոդվածին համապատասխան, իսկ փոփոխությունների եւ լրացումների մասին Արձանագրությունները հանդիսանում են Կանոնադրության անբաժանելի մասը եւ ուժի մեջ են մտնում 26-րդ հոդվածով հաստատված կարգով, այն է՝ ստորագրող պետությունների՝ վավերացման մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահին հանձնելու պահից:

Քննարկվող միջազգային պայմանագրի նախաբանում ամրագրված է, որ Արձանագրության հիմնական նպատակն է բարձրացնել Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության /այսուհետ՝ Կազմակերպություն/ գործունեության արդյունավետությունը եւ հնարավորությունները, ինչպես նաեւ նպաստել միջազգային, արտաքին քաղաքական, ռազմական, ռազմատեխնիկական /ռազմատնտեսական/, իրավական եւ այլ գործունեության ոլորտներում, նոր մարտահրավերներին եւ սպառնալիքներին հակազդման ոլորտում Կազմակերպության շրջանակներում իրականացվող համագործակցության հետագա զարգացմանը:

Վերը նշված նպատակների իրագործման համար՝ Արձանագրությամբ հստակեցվում եւ էապես ընդլայնվում են Կազմակերպության գործունեության կոնկրետ ուղղությունները, բարենորոգվում են դրա ներքին կազմակերպական կառուցվածքն ու ֆինանսավորման կարգը, ներդրվում է Կազմակերպության Խորհրդի կողմից սահմանափակ ձեւաչափով որոշումների կայացման եւ ընդունման իրավական հնարավորությունը:

Արձանագրությամբ համապատասխան փոփոխություններ եւ լրացումներ են կատարվում Կանոնադրության 1-ին, 7-րդ, 8-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ եւ 24-րդ հոդվածներում, իսկ 5-րդ գլուխն ամբողջովին շարադրվում է նոր խմբագրությամբ, Կանոնադրությունը լրացվում է նաեւ 16^1 եւ 18^1 հոդվածներով:

Կազմակերպության շրջանակներում իրականացվող բարեփոխումների արդյունքում ակնկալվում է, որ մեծանալու են ժամանակակից մարտահրավերներին եւ սպառնալիքներին հակազդելու՝ Կազմակերպության իրական հնարավորությունները՝ դրանով իսկ նպաստելով ՀԱՊԿ անդամ պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության, անվտանգության ամրապնդմանը:

2. Խնդրո առարկա Արձանագրության 11-րդ հոդվածի լրացմամբ՝ նախատեսվում են Կազմակերպության Մշտական խորհրդի, իբրեւ կանոնադրական մարմնի, ձեւավորման ընթացակարգը, գործունեության հիմնական ուղղությունները, հստակեցվում են նրա խնդիրները եւ գործառույթները /հոդված 16^1/: Սահմանվում է, որ Մշտական խորհուրդը հանդիսանում է Կազմակերպության համակարգող մարմինը՝ կազմված մշտական ներկայացուցիչներից, որոնք նշանակվում են անդամ պետությունների ղեկավարների կողմից՝ իրենց ներպետական ընթացակարգերի համաձայն, գործում է Խորհրդի կողմից հաստատվող Կանոնակարգի համաձայն:

Հիշատակված հոդվածի վերլուծությունը վկայում է, որ Կազմակերպության մշտական գործող աշխատանքային մարմիններն են՝ Կազմակերպության Քարտուղարությունը եւ Միացյալ շտաբը: Կազմակերպության միջխորհրդարանական համագործակցության մարմին է հանդիսանում Կազմակերպության Խորհրդարանական վեհաժողովը:

Դիտարկվող Արձանագրությունից բխում է, որ Քարտուղարությունն իրականացնում է Կազմակերպության մարմինների գործունեության կազմակերպչական, տեղեկատվական, վերլուծական եւ խորհրդատվական, իսկ Միացյալ շտաբը՝ պաշտպանության նախարարների խորհրդի գործունեության կազմակերպչական եւ տեղեկատվական-վերլուծական ապահովումը, պատասխանատու է Կազմակերպության ռազմական

բաղադրիչի վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստման համար /հոդվածներ 18 եւ 18[1]/:

Միաժամանակ հարկ է նշել, որ Արձանագրությամբ սահմանվում են Կազմակերպության գլխավոր քարտուղարի՝ իբրեւ Կազմակերպության բարձրագույն վարչական պաշտոնատար անձի, նշանակման կարգը, իրավական կարգավիճակը, գործունեության ոլորտները, ինչպես նաեւ նրա հիմնական գործառույթները: Գլխավոր քարտուղարը, մասնավորապես, իրականացնում է Քարտուղարության ղեկավարումը, համակարգում է Կազմակերպության մշտապես գործող աշխատանքային մարմինների գործունեությունը /հոդված 17/:

Կանոնադրության 12-րդ հոդվածում կատարված լրացման արդյունքում Կազմակերպության բարձրագույն մարմինը՝ Հավաքական անվտանգության խորհուրդն իրավասու է ընդունելու որոշումներ սահմանափակ ձեւաչափով՝ պայմանով, որ անդամ պետություններից ոչ մեկը չի առարկում որոշման ընդունման նման կարգի եւ կոնկրետ որոշման դեմ: Սահմանափակ ձեւաչափով որոշման ընդունման համար չքվեարկած անդամ պետությունը պատասխանատվություն չի կրում ընդունված որոշման հետեւանքների համար:

Համաձայն Կանոնադրության 24-րդ հոդվածի փոփոխության՝ Կազմակերպության մշտապես գործող աշխատանքային մարմինների ֆինանսավորումն իրականացվում է Կազմակերպության բյուջեի միջոցների հաշվին, բացի դրանից, կարող են ներգրավվել նաեւ արտաբյուջետային միջոցներ /բացի փոխառու միջոցներից/:

3. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

-Կազմակերպության անդամ այլ պետությունների հետ համատեղ միջոցներ ձեռնարկել անվտանգության, կայունության, տարածքային ամբողջականության ու ինքնիշխանության սպառնալիքի առաջացման դեպքում հավաքական պաշտպանության եւ հավաքական պաշտպանության իրավունքի իրագործում, ներառյալ Կազմակերպության կոալիցիոն /հավաքական/ ուժեր, տարածաշրջանային /միավորված/ զորքերի /ուժերի/ խմբավորումներ, խաղաղապահ ուժերի միավորված համակարգեր եւ դրանց կառավարման մարմիններ, ռազմական ենթակառուցվածքի ստեղծում ապահովող հավաքական անվտանգության գործուն համակարգի ձեւավորման ուղղությամբ,

-փոխգործակցել ռազմատեխնիկական /ռազմատնտեսական/ համագործակցության, զինված ուժերին, իրավապահ մարմիններին եւ հատուկ ծառայություններին անհրաժեշտ

սպառազինությամբ, ռազմական, հատուկ տեխնիկայով եւ հատուկ միջոցներով ապահովման, զինվորական կադրերի եւ ազգային զինված ուժերի, հատուկ ծառայությունների եւ իրավապահ մարմինների համար մասնագետների պատրաստման ոլորտներում,

-միջոցներ ձեռնարկել Կազմակերպության շրջանակներում անդամ պետությունների անվտանգությանը, կայունությանը, տարածքային ամբողջականությանը եւ ինքնիշխանությանն սպառնացող ճգնաժամային իրավիճակներին արձագանքման համակարգի ստեղծման եւ գործառման համար,

-փոխգործակցել անդամ պետությունների հետ պետական սահմանների, տեղեկատվության փոխանակման, տեղեկատվական անվտանգության, բնածին եւ տեխնածին բնույթի իրավիճակներից, ինչպես նաեւ ռազմական գործողությունների վարման ընթացքում կամ հետեւանքով առաջացող վտանգներից բնակչության եւ տարածքների պաշտպանության ոլորտներում /հոդվածներ 7 եւ 8/:

Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկանքի՝ Հայաստանի Հանրապետությունը չի ստանձնում ֆինանսական պարտավորություններ:

4. Արձանագրության հետազոտության արդյունքները վկայում են, որ դրանով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին եւ նպատակներին:

Անհրաժեշտ է նշել, որ Արձանագրության հայերեն տեքստում տեղ են գտել ոչ ճիշտ թարգմանություններ, մասնավորապես, «ինքնիշխանություն» բառի փոխարեն օգտագործվել է «ինքնավարություն» բառը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ «2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության Կանոնադրությունում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության

մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

28 հունիսի 2011 թվականի
ՍԴՈ-982